ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԿԻԼԻԿՅԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վ. Գ. ՍՎԱԶԼՅԱՆ

1915 թ. Մեծ եղեռնից և նրան հաջորդող պատմական իրադարձություններից հետո Արևմտյան Հայաստանի, Փոքր Հայքի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաբնակ գավառներն իսպառ ամայացան։ Արևմտահայության զգալի մասը բնաջնջվեց, իսկ հրաշքով փրկվածները սփռվեցին աշխարհի տարբեր երկրներ։ Նրանցից շատերը Կ. Պոլսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Բալկանյան երկրներից, Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից և այլ վայրերից պարբերաբար հայրենադարձվել են Մայր Հայաստան և բնակություն հաստատել իրենց երբեմնի բնօրրանների հիշատակները հավերժացնող Նոր Արաբկիր, Նոր Զեյթուն, Նոր Արեշ, Այնթապ, Մարաշ, Եդեսիա, Կիլիկիա, Մուսա լեռ և այլ նորակառույց բնակավայրերում։

Պատմական վերոհիշյալ իրադարձություններին ականատես-վկա, տարագիր հայրենադարձների ավագ սերնդի ներկայացուցիչներից դեռևս 1950-ական թվականներից (սկզբում՝ մեր անձնական նախաձեռնությամբ, այնուհետև՝ նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմակերպած անհատական գիտարշավների շնորհիվ) գրի ենք առել բազմաթիվ հուշապատումներ, բանահյուսական տարաբնույթ նյութեր և հատկապես պատմական դեպքերի ու դեմքերի վերաբերյալ փաստալից զրույցներ, երգեր ու վիպերգեր, որոնք վերարտադրում են ոչ միայն նրանց անցյալի նիստուկացը, այլև թուրքական կառավարության կազմակերպած տեղահանությունները ու կոտորածները, ինչպես նաև Կիլիկիայի խիզախ հայության արդար ու ազնիվ ոգորումները[1]։

Այդ երգերը հորինվել են և՛ հայերեն, և՛ թուրքերեն, քանի որ քաղաքական, ստիպողական հանգամանքներում հայերեն խոսելը հաճախ արգելված է եղել։

Պատմաճանաչողական կարևոր արժեք ներկայացնող բանահյուսական այդ նյութերը, սակայն, տարբեր պատճառներով մեզանում ցարդ գրեթե չեն գրառվել և ուսումնասիրվել։

Բուլանդիայի կողմից հայ Բագրատունիների և մյուս տեղական թագավորությունների կործանումից հետո սելջուկյան հրոսակների բռնություններից ու նոտորածներից խուսափող բազմաթիվ իշխանական տներ իրենց դինվորական ուժերի, վասալների և հարկատու բնակչության հետ տեղափոխվեցին Կիլիկիա՝ նրա տարբեր շրջաններում տիրելով ընդարձակ կալվածքների, բերդերի ու բերդաքաղաքների։ Հայերն աստիճանաբար իրենց ձեռքում կենտրոնացրին նաև ռազմական, քաղաքական, տնտեսական ու մշակութային նյանքը։ Վերապրող կիլիկիացիները դեռ մինչև վերջերս վկայակոչելով իրենց նախնիներին՝ հաստատում են, որ իրենք Անիից են գաղթել։ 94-ամյա զերթունցի Կարապետ Թոզլյանը մեզ հաղորդել է. «Մենք Անի քաղաքի ժողովուրդ ենք։ Անիի կործանումեն ետքը, մերոնք էկեր են Զեյթուն, տունտեղ են դրեր, եկեղեցի են շիներ, ապրեր են։ Զեյթունի մեջ մենք ոնեինք

---

1 Այդ նյութերը պահպանվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում, Վկրժինե Սվազլյանի ֆոնդում (այսուհետև կնշվի միայն վավերագրի համարը)։

Անի ձոր, Ղարսի կամուրջ, Արյան ձորի վրա Շուղրի կամուրջ։ Ադ բոլոր անունները Անի քաղաքեն էր»[2]։

Լևոն Բ Մեծագործ թագավորի օրոք կազմակերպված հայերի վերաբնակեցման մասին է վկայում ժողովրդական հետևյալ երգի պատառիկը.

Մշո դաշտեն էլեր, կուգանք,
Խամշին փաթթեց Լեոն արքան,
Օտարական ենք մնացել.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք[3]։

1453 թ., Կոստանդնուպոլսի անկումից հետո, Հայկական Կիլիկիան նվաճեցին օսմանյան թուրքերը, իսկ XVII դ. կեսից այնտեղ գրեթե ինքնագլուխ իշխեց ավշարական Ղոզան օղլու ցեղը։ Զեյթունցիները, օգտվելով իրենց աշխարհագրական նպաստավոր պայմաններից, բանուկ ճանապարհներից հեռու ընկած անառիկ լեռների ու ձորերի գրկում, վաղուց կիսանկախ կյանք էին վարում և միայն չնչին տուրք էին վճարում թուրքական կառավարությանը։ Այդ հանգամանքն անհանդուրժելի էր Մարաշի փաշաներին ու շրջակա մահմեդական ցեղապետերին, որոնք բազմիցս փորձում էին վերացնել Զեյթունի կիսանկախ վիճակը, բայց այդ նրանց չէր հաջողվում։ Զեյթունցիները մշտապես պատրաստ էին հակահարված տալ թշնամուն, որպեսզի պաշտպանեն իրենց գոյությունն ու պատիվը. «Էնոր համար ալ,—շարունակել է Կ. Թոզլյանը,—մենք խաղի, պարի ետևեն չէինք. մենք թյուֆենգբարութ (հրացան-փատրդ) շինելու ետևեն էինք, որ մեր նամուսը թուրքին ձեռքը չանցնի։ Էնոր համար ալ մեր երկիրը բոլուզ (տղա), որ ծնվեր կըսեին՝ չախմախիու մըն ալ էվըլցով (մի հրացան բռնող ևս ավելացավ)։ Զեյթունցի մեր մայրերն ալ որպես օրորոցային կերգեին.

Բոլուզս վողը գդրտջ մը գունա,
Կիդենը փոռ լյաշը դյուշմունա.
Այձոթ-աբրրջոն թիֆոնգը բեջը՝
Դալմըշ բրդ ինա դյոգյուշան մեջը[5]։

Որդիս վաղը կդառնա կտրիճ[4].
Թշնամու դիակը կփռե գետնին.
Արծաթ-օղակով հրացանն ուսին՝
Ինքնամոռաց նա պիտի կռվի»։

Մարդկային տարրական իրավունքների գիտակցությամբ, արժանապատվության ու մեծահոգության ոգով դաստիարակված Կիլիկիացիներին, անշուշտ, անհարիր էր օտարի լուծն ու բռնությունը։ «Օրին մեկը,—շարունակել է Կ. Թոզլյանը,—Ազիզ փաշան կէլյա Մարաշեն 40 հազար ասքյար կհավաքե, ճամփին ալ 10 հազար բաշիբոզուկ կժողվե, կուգա, որ Զեյթունը ջնջե՝ տեր դառնա մեր հողերուն, մեր աղջիկ-կնիկներուն։ Եվ 1862 թ. մեր զեյթունցիները կռվեցան.

Ազիզ փաշան էկավ, թնդանոթ լարեց,
Հարյուր արկ նետեց՝ էշ մը գլտորեց,
Թաշչյանը թոփչին զարկավ՝ տապալեց,
Փաշան սոսկումեն գետինը փռվեց»[6]։

Այնուհետև հարձակվում է Աշիր փաշան, որին հանձնարարված էր պատժել ապստամբ զեյթունցիներին, սակայն գործին միջամտում է ֆրանսիական կառավարությունը, և զեյթունցիների խնդիրը իբր լուծվում է «խաղաղությամբ»։

---

2 Վավ. 66։
3 Վավ. 417։
4 Բարբառային և թուրքալեզու բնագրերի հայերեն թարգմանությունները մերն են։
5 Վավ. 78։
6 Նույն տեղում։

Զեյթունցիները, չհաշտվելով ստեղծված իրավիճակին, կրկին զենքի են դիմում և քաղաքից վտարելով թուրք կայմակամին, իրենց անկախ են հայտարարում։ Թուրքական կառավարությունը, ռազմական ուժեր կենտրոնացնելով, որոշում է ճնշել նրանց, բայց զեյթունցիները դարձյալ չեն ենթարկվում և հրաժարվում են հարկ վճարել։ Ապստամբների դիմադրությունը շարունակվում է մինչև 1879 թ., երբ Բարձր Դուռը ստիպված բանակցություններ է վարում նրանց զլխավորող Պապիկ իշխանի հետ՝ նրան ճանաչելով Զեյթունի քաղաքագլուխ.

Պապիկ փաշա դեղի.—Քիմսեյե դաթմամ,
Հալեպ վալիսինին աղզրնա բաքմամ,
Յուղ բին ասքեր գելսին՝ երիմդեն քալքմամ,
Ալաման Զեյթունը, դյոն, Ֆերի՞դ փաշա՞։

Պապիկ իշխանն ասաց.—Ոչ մեկին հաշվի չե՞մ առնի,
Հալեպի վալու հրամանը չե՞մ լսի,
Հարյուր հազար ասկյար թե գա՝ տեղիցս չե՞մ վեր կենա,
Զեյթունը չգրաված՝ ետ դարձիր, Ֆերի՞կ փաշա։

Զեյթունի 1895 թ. ապստամբությունը տեղի է ունենում սուլթանական Թուրքիայի կազմակերպած հայկական կոտորածների պայմաններում, երբ զեյթունցիները նորից դիմում են ինքնապաշտպանության։ 75-ամյա իշխան Ղազար Շովրոյտնի և Անգլիայից ժամանած հնչակյան գործիչ Աղասի Թուր-Սարգսյանի գլխավորությամբ զեյթունցիները կրկին ապստամբության դրոշ են բարձրացնում։ Պաշարում են տեղի թուրքական զորանոցը, որը Զեյթունի կառավարական շենքն էր և որտեղ 600 ասկյար էր վարժվում։ Զեյթունցիները կտրում են զորանոցի ջուրը, զինաթափ են անում թուրք կայազորին, գրավում են ռազմամթերքն ու սննդամթերքը։ Ցայրացած սուլթան Համիդը որոշում է «մոխրակույտի վերածել այդ լեռը»։ Նա հրամայում է Շամի, Հալեպի, Բեյրութի, Ադանայի թուրքական գնդերին (60 վաշտ զորք) Ռամզի փաշայի գլխավորությամբ, մի քանի ուղղություններով զրոհել Զեյթունի վրա, բայց՝ ոչ մի արդյունք։ Այնուհետև Այի բեյը 30 հազար զորքով հարձակվում է Ֆրոնլուղ գյուղի վրա։ Հայերը փոքրաթիվ ուժերով երեք օր դիմադրում են՝ թշնամուն պատճառելով մեծ կորուստներ։ Ռամզի փաշայի բանակը կրկին է հարձակվում, այս անգամ արդեն՝ Սանդուխ լեռան ստորոտին դիրքեր գրաված 150 հայերի վրա։ Թուրքերը, բազմաթիվ կորուստներ կրելով, նահանջում են։ Այդ դեպքերն իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել զեյթունցիների բարբառով ծավալուն վիպերգի մեջ, որից մեջբերում ենք մի հատված.

Պեյտիս ճոյը ձիձվիցոնք,
Իգոնք ղշլայն դեխիցոնք,
Ասքեյնին եսիյ առոնք.
Միյ բայոխը դնգիցոնք։

Բերդիզ Ցայի մոտ կովեցինք.
Եկանք զորանոցը դրավեցինք,
Ատկյարներին դերի վերցրինք.
Մեր դրոշակը պարզեցինք։

Փաշան լսից՝ գաղղիցով,
Իզիք Ջիմոգ պանագիցով,
Սանդոխը հիդվինուս ձիձվիցով,
Մաշջո էղով՝ քիշվիցով[8]։

Փաշան լսեց՝ կատաղեց,
Եկավ Ջերմուկ՝ բանակեց,
Սանդոխ լեռան տակ կովեց,
Խայտառակվեց՝ խույս տվեց։

Նման անձնվեր պայքարով, ավելի քան երկու ամիս, մի բուռ զեյթունցիներ դյուցազնաբար կռվելով թուրքական բազմահազար զորքերի դեմ

7 Վավ. 397։
8 Վավ. 399։

ամեն զրկանք կրում են, բայց թշնամու առաջ չեն խոնարհվում։ Այդ նույն՝ 1895—1896 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանում և Անատոլիայի հայաբնակ գավառներում սուլթան Համիդի կազմակերպած զանգվածային կոտորածներին զոհ դարձան շուրջ 300 հազար հայեր։

Սուլթան Համիդի իշխանության տապալումից հետո կառավարության ղլուխ անցած երիտթուրքերը, դավանելով պանթուրքական և պանիսլամական գաղափարախոսությունը, ձգտում էին ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունը, այլև բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել-թուրքացնել հայերին և քրիստոնյա մյուս ժողովուրդներին, ստեղծել համաթուրքական տերություն՝ Միջերկրականից մինչև Արալյան ծով, որի մեջ կմտնեին բոլոր մահմեդականները։ Պատմաքաղաքական այդ պայմաններում է կազմակերպվել «Ադանայի կոտորածը» (1909 թ. ապրիլ), որը Կիլիկիայի հայության հիշողության մեջ մնացել է, որպես «Ղըյմա (մորթված) Ադանա»[9]։

Երեք օրվա ընթացքում, ինչպես ժողովրդի մեջ տարածված երգն է վկայում, «Անապատ դարձավ շքեղ Կիլիկիան...»[10]։ Ադանայի դեպքերի անմիջական տպավորության տակ է հորինված արտահայտչական խորությամբ ու գեղարվեստական պատկերավորությամբ հագեցած հետևյալ երգը.

Հե՜յ, չամլա՜ր, չամլա՜ր, ալ-աչք չամլա՜ր,
Հեր գյոմնեշ վուրունչա՝ սաքըզ դամլար,
Աղանա ըրմաղը՝ լեշ իլան քանըար,
Իշդե գելդիմ սանա, ղըյ՜մա Ադանա,
Իշդե գյորդիմ սիզե, ղըյ՜մա չոջուքլար[11]։

Հե՜յ, մայրինե՜ր, մայրինե՜ր, գուլն-գուլն մայրինե՜ր,
Ամեն արև դիպչելիս՝ խեժը ծորում է կաթ-կաթ,
Ադանայի գետում՝ արյուն և դիակ.
Ահա քեզ եկա, ջարդվա՜ծ Ադանա,
Ահա ձեզ տեսա, մանո՜ւկներ մորթված։

Կիլիկիայի կոտորածին զոհ դարձան շուրջ 30 հազար հայեր։ Ավերվեցին ու հրկիզվեցին տասնյակ հայաբնակ քաղաքներ ու գյուղեր։ Այնինչ Դյորթյոլը, Հաճընը, Մուսալեռը, Սիսը, Զեյթունը, Շեյխ-Մուրադը, Ֆընդըջաքը և հայկական մի շարք այլ բնակավայրեր, իրենց հերոսական ինքնապաշտպանությամբ, կասեցրին տասնյակ հազարավոր թուրքերի հարձակումը և փրկվեցին կոտորածից։

Ըստ էության, դա Մեծ եղեռնի նախերգանքն էր, երբ երիտթուրքերը տենդորեն նախապատրաստվում էին հիմնովին բնաջնջել հայ ժողովրդին՝ սպասելով հարմար առիթի։ Այդ առիթը ստեղծվեց, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը։

Թուրքիայում ապրող քրիստոնյա ազգերի, այդ թվում նաև հայերի համար մեծագույն չարիք էր դարձել սեֆերբիրլիքը՝ զորահավաքը։ 20—45 տարեկան տղամարդկանց, զորահավաքի անվան տակ, ներգրավում էին «աշխատանքային գումարտակների» մեջ և, ըստ հատուկ հրահանգի՝ աչքից հեռու, ծածուկ վայրերում սպանում[12]։ Ահա թե ինչու թուրքական բանակին բռնի զինվորագրված հայ երիտասարդը նախազգում էր.

Բունա էոյում յոլը դերլեր.
Ալլա՜հ քուրթարսըն,

---

9 Ավելի մանրամասն տես, ադանացի Սրբոժի Մակարյանի (ծնվ. 1903 թ.) և Միքայել Քեշիշյանի (ծնվ. 1904 թ.) պատմած հուշերը, վավ. 1408, 1409։

10 Զեյթունցի վիպագիր Սմբատ Բյուրատի բանաստեղծության ժողովրդականացած այս տարբերակը տես վավ. 448։

11 Վավ. 446։

12 Ավելի մանրամասն տես չանաքալեցի Գևորգ Զոլալյանի (1909 թ.) հուշը, վավ. 1461։

Էրմենիլեր չոք դըր դերլեր.
Ալլա՜հ սաքլասըն[13]։

Սրան մահվան ճամփա կասեն.
Աստվա՜ծ թող փրկի,
Հայերն այնտեղ շատ ու շատ են.
Աստվա՜ծ պահպանի։

Եվ հայ երիտասարդը հանգում է ճիշտ եզրակացության.

Թուրքի բանակ երթալու եմ,
Հրացան բռնելու եմ,
Ես ի՞նչ ընեմ Տաճկաստան.
Ահա կերթամ՝ Հայաստան[14]։

Թուրքական զորահավաքն ուղեկցվում էր համատարած շուրջկալներով, որոնց ընթացքում, «զենք հավաքելու» պատրվակի տակ, ավերում էին հայերի տները, կողոպտում նրանց ունեցվածքը, ձերբակալում և սպանում շատերին.

— Օլա՜ն, զյավո՜ւր, դողրու սեոյլե,
Սենին մարթին վարը՞մըշ։
— Հե՜յ զյավո՜ւր, ճիշտն ասա,
Քեզ մոտ հրացան կա՞։

Հայ երիտասարդն իբր անտեղյակ ժխտում է, բայց իր մտքում ասում.

Պատեն կախված է. չե՜մ ըսեր,
Հայոց ազգը չե՜մ մատներ[15]։

Զորահավաքին ու զինահավաքին հաջորդում են հայ մտավորականության ձերբակալությունները, որպեսզի հայ ժողովուրդը զրկվի ոչ միայն ռազմունակ ուժից, այլև՝ ղեկավար մտքից։ Դեպի Միջազետքի անապատներն էին քշվում օսմանյան խորհրդարանի անդամ Գրիգոր Զոհրապը, Ռուբեն Սեվակը, Սիամանթոն, Վարուժանը, մեծ երաժիշտ Կոմիտասը և շատ ուրիշներ։ Փակվում էին հայկական դպրոցները.

Դպրոցը մտան, վարժուհուն բռնեցին,
Վա՜յ, ամա՜ն,
Բերանը բացեցին, լեզուն կտրեցին,
Ա՜խ, ամա՜ն[16]

քանի որ վարժուհին հանդգնել էր հայ մանուկներին հայերեն ուսուցանել։

Բռնագաղթը նախ սկսվում է Կիլիկիայից։ Կիլիկիայի արծվաբույն Զեյթունն արդեն վաղուց թուրքական ջոնակալության աչքի փուշն էր։ Ժամանակն էր հին հաշիվները մաքրել համարձակ զեյթունցիների հետ։ Զեյթունցիները, որոնք անցյալի ազատագրական պայքարի փառապանծ ավանդույթներ ունեին, կարող էին այս անգամ ևս անձնվեր պայքարի դուրս գալ, բայց դրան խանգարեցին Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խապայանն ու հայ երևելիները, որոնք խաբվելով թուրքական կառավարության կեղծ խոստումներից՝ «հնազանդության» կոչ արեցին՝ պատճառաբանելով, որ «Փոքր չարժում մը կրնա վտանգել Թուրքիո նահանգներու ամբողջ հայությանը»։ Կիլիկիայի հայերին վերևից պարտադրված այս «անգործնականությունը» ող-

13 Վավ. 424։
14 Վավ. 423։
15 Վավ. 437։
16 Վավ. 449։

բերգական տողերով է նկարագրված «Կաթողիկոսդան գելդի քարտ խարերը» (Կաթողիկոսից եկավ սև լուրը, այսինքն՝ զենքի չդիմելու հրահանգը) ծավալուն վիպերգի մեջ[17]։

Թուրքական կառավարությանն արդեն հաջողվել էր հավաքել հայերի զենքերը, երիտասարդներին զինվորագրել բանակ, իսկ անօգնական մնացած ժողովրդին կողոպտում էին «դինտիզ-իմանսըզ» (անխիղճ-անհավատ) զաբիթներն ու ոստիկանները, պատվազրկում էին հայ աղջիկներին ու կանանց։ Զդիմանալով այս բոլորին, զեյթունցի քսան երիտասարդներ, Փանոս Զաղրյանի ղեկավարությամբ, ինքնապաշտպանության են դիմում և Զեյթունի Ս. Ասվածածին վանքից կրակ բացում։ Հաջորդ օրն իսկ Զեյթունի 300 երեխաներ շղթայակապ տարվում են Մարաշ, որոնցից մի մասին թուրքերը կախաղան են հանում, իսկ մնացածին՝ քշում անհայտ ուղղությամբ։

Այնուհետև ավերվում է Զեյթունը։ Մեկը մյուսի ետևից դատարկվում են ինքնապաշտպանական կռիվներում մարտիրոսացած Ֆրնդրջագը, Այնթապը, Հաճընը, Անտիոքը, Իսկենդերունը, Քեսաբը, Շեյխ-Մուրադը, Մարաշը և այլ հայաբնակ վայրեր։ Մուսալեռցի Պողոս Սուպկուկյանը (աշուղ Դեելլի) բնիկ բարբառով հետևյալ կերպ է նկարագրել Կիլիկիայի բռնազաղթը.

Հազուր էննը հարեր դրսնրհենգ դարեն
Իղուվ փրթրվիլը Կիլիկը էրմանեն,
Էնվեր վե Թալնաթ դիժգը փաշինեն
Սաբաբ իղուն մըհաջըրլըքեն.
Բրթըն մաֆ իրեն էրմանը միլլաթեն...
Խոսքը լսվիցուվ Ցաղուբինց Իսայեն.
— Լի՜ոը թըղ ըննին,—ասուց կեղանդեն,
Վեզ չըբըր ձոինք մինք միր գյուշմանեն,
Նիդինք, նիդրղվինք՝ միռնինք միր խուղեն[18]։

Հազար ինն հարյուր տասնհինգ թվին
Եղավ կոտորածը Կիլիկիո հայության,
Էնվեր և Թալեաթ թուրք փաշաները
Պատճառ դարձան գաղթականության.
Բնաջնջեցին հայ ժողովրդին...
Եսայի Ցաղուբյանի կոչը լսեցին.
— Լե՜ոը բարձրանալ,—ասաց գյուղացոց,
Թշնամու առաջ մենք վիզ չծռենք,
Զարկենք, զարկվենք՝ մեր հողում մեռնենք։

Մուսա լեռան հերոսամարտի մասնակից 1885 թ. ծնված Մովսես Փանոսյանը մեզ պատմել է, թե ինչպես մուսալեռցիները մեկ մարդու պես երդվել են չենթարկվել բռնագաղթի հրամանին.

Իս հո՜ւս ձնունձ իմ,
Հո՜ս ալե բըր միռնիմ.
Իս չըմ ուրթո յասսեր քիմը միռնիլ,
Թվունգը ծառիս գըմիռնեմ յաս դիղը
Թաքա մուհաջըր չըմ ընոո[19]։

---

17 Վավ. 406։

18 Վ. Սվազլյան, Մուսա լեռ, Հայ աղգագրություն և բանահյուսություն, հ. 16, Երևան, 1984, էջ 128։

19 Վավ. 1397։

Ես այստե՛ղ եմ ծնվել,
Այստե՛ղ էլ կմեռնեմ.
Ես չեմ գնա ստրուկի պես մեռնելու,
Հրացանը ձեռքիս այստեղ կմեռնեմ,
Բայց գաղթական չեմ դառնա։

Բողոքի ու վրեժխնդրության զգացումը համակում է բոլորին։ Մանուկ ու ծեր, թողնելով իրենց տունն ու այգին, բարձրանում են Մուսա լեռան գագաթը։ Մուսալեռցիներն անխտիր սկսում են հյուղակներ կառուցել, խրամատներ փորել, ամուր պատերով պատնեշներ բարձրացնել՝ հրակնատներ թողնելով։ Որոշ տեղերում, թշնամուն տեսնելու համար, կտրատում են անտառները։ Փոքրիկ տղաները՝ «թելեֆոնի տղաները», կապավոր են դառնում։ Կանայք կազմակերպում են սնունդը։ Աղջիկներն ու հարսները հեռվից ջուր են կրում կռվողների համար։ Թշնամին քայլ առ քայլ մոտենում է դիրքերին։ Մուսալեռցիները հիսուներեք օր մարտեր են մղում՝ հերոսաբար դիմադրելով թշնամու բազմահազար զորքերին։ Նրանց պարենն ու զինամթերքը սպառվում է, սակայն հերոսական ոգին՝ երբեք.

Մենք մուսալեռցի հայ կտրիճներ ենք,
Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք,
Թուրքը մեղ կուզե տեղահան ընել,
Անապատներում մեզ բնաջնջել։

Մենք չե՛ք կամենար լինել շանսատակ,
Այլ՝ կուզենք թողնել մի լավ հիշատակ.
Փառքով մեռնիլը մեզի պատիվ է.
Նահատակվիլը ազգին պարծանք է[20]։

Մուսա լեռան հերոսամարտն աշխարհը ցնցեց. այն ցույց տվեց մարդկությանը, թե ինչի է ընդունակ մի բուռ ժողովուրդ, եթե ունի հերոսական ավանդույթներ և միասնական կամքի ուժ։

1915 թ. հոկտեմբերին Ուրֆայի հայերը ևս ինքնապաշտպանության են դիմում՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանի և Հարություն Ռասթկելենյանի գլխավորությամբ։ Ոտքի է կանգնում Ուրֆայի ողջ հայությունը. մանուկ ու ծեր, տղա ու աղջիկ, բոլորը զինված, ինքնամոռաց կռվում են քառասունհինգ օր ու գիշեր անդադար։ Ուրֆայի հայոց թաղամասերը բաժանվել էին մարտական վեց շրջանների, որտեղ տեղաբաշխված էին 800 մարտիկներ։ Ուրֆացիները գերադասում էին մեռնել զենքը ձեռքին, քան հանձնվել թշնամուն։ Ֆախրի փաշան հետզհետե սեղմում է պաշարման օղակը, բայց ուրֆացիները մնում են անդրդվելի[21].

Ուրֆա բոյու՝ ալըըլմաղ,
Դիբի ղայիմ՝ դագըլմաղ,
Ուրֆանըն իգիթլարը
Հե՛չ բիր երե բուլունմաղ[22]։

Ուրֆան մեծ է՝ չի բաժանվի,
Հատակը պինդ է՝ չի փորվի,
Ուրֆայի կտրիճները
Ո՛չ մի տեղում չես գտնի։

---

20 Վավ. 402։

21 Ավելի մանրամասն տե՛ս ուրֆացի Խորեն Արզաքանցյանի (ծնվ. 1893 թ.) հուշը, վավ. 1422։

22 Վավ. 404։

Կատաղած Ֆախրի փաշան ասել է. «Ի՞նչ կլինի մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այսպես ծառանան»[23]։ Սակայն Թուրքական կառավարությունը կանոնավոր զորք է ուղարկում և դաժան հաշվեհարդար տեսնում Ուրֆայի անձնվեր հերոսների հետ։

Իսկ տուն ու տեղից զրկված հայ աքսորականների հետզհետե նվազող քարավանները դեռ շարժվում էին Դեր Զորի և Ռաս էլ Այնի անծայրածիր անապատներում։

Տեղահանությունն ու կոտորածն արդեն ընդգրկել էին ոչ միայն Կիլիկիան, այլև՝ Փոքր Հայքը, ամբողջ Արևմտահայաստանի հայաբնակ շրջանները։

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թ. մայիսի 16-ին, Անգլիայի և Ֆրանսիայի գաղտնի համաձայնագրով (Սայքս-Պիկո), Թուրքիայի պարտության դեպքում երկու միլիոն վեց հարյուր հազար հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի տիրապետության ներքո։ Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները Հայկական ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնվել էին, որ Թուրքիայի դեմ պատերազմի հաղթական ելքից հետո, հայերին կտրվեն քաղաքական լայն հնարավորություններ, և հայ կամավորները կդառնան նորակազմ Ինքնավար Հայկական Կիլիկիայի քաղաքապահ զինվորներ։ Ուստի թուրքական բանակից, աքսորի ճամփաներից փախած, տարբեր վայրերից և նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները (մուսալեռցի, ղնյթունցի, ուրֆացի, այնթապցի, մարաշցի, քեսաբցի, հաճընցի, հուսենիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի և այլն) զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արևելյան (Հայկական) լեգեոնը։ Հայ կամավորներն իրենց նահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, իրենց մասնակցությամբ պարտության են մատնում գերմանաթուրքական զորքերին և 1918 թ. Պաղեստինում Արարայի մոտ նվաճում փայլուն հաղթանակ։

Հայ լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական ու անգլիական հրամանատարության դրվատանքին։ Գեներալ Ալենբին 1918 թ. հոկտեմբերի 12-ին Հայ Ազգային պատվիրակության նախագահ Նուպար փաշային հղած հեռագրում նշել է. «Ես հպարտ եմ հրամանատարությանս տակ հայկական զորամաս ունենալուս համար։ Նրանք կռվեցին փայլուն կերպով և մեծ բաժին ունեցան հաղթանակի մեջ»[24]։

Սևրի պայմանագրով (1920 թ. օգոստոսի 10) Կիլիկիայի վրա հաստատվելու էր Անտանտի երկրների հսկողությունը, և թուրքական զորքերը դուրս էին բերվելու Կիլիկիայից։

Դեր Զորի, Ռաս էլ Այնի և այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկված, ուժասպառ և հյուծված հայ աքսորականները կամաց-կամաց գալիս, տեղավորվում են Կիլիկիայում։ Նրանք ապագայի նկատմամբ հույս ու հավատով սկսում են վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները, սակայն իշխանության գլուխն անցած քեմալականներին հաջողվում է դաշնակից տերությունների աջակցությամբ հասնել այն բանին, որ Ֆրանսիան զորքերը դուրս բերի Կիլիկիայից։ Ֆրանսիական զինվորական վարչությունը ոչ միայն լուրջ միջոցներ չի ձեռնարկում հայերի անվտանգությունն ապահովելու համար, այլև տեղերում իշխանությունը թողնում է թուրք զինվորական պաշտոնյաների ձեռքին, և մահմեդականները չեն զինաթափվում։

Չճանաչելով Սևրի պայմանագիրը և օգտվելով ֆրանսիական զինվորական վարչության անվճռականությունից և թուլությունից, քեմալական զորքերն ու տեղի չեթեներն իրենց զենքն ուղղում են Կիլիկիայի հայության դեմ։

---

23 Մ. Արզումանյան, Հայաստան 1914—1917, Երևան, 1969, էջ 453։

24 Ռ. Գ. Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ., Երևան, 1970, էջ 117։

1920 թ. հունվարից քեմալական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերի վրա։ Քսաներկու օր տևող կատաղի մարտերում Մարաշ քաղաքի 11 հազար հայեր կոտորվում են ու մոխրացվում.

Մարաշդա Մարաշ դերլեր, յամա՜ն, յամա՜ն,
Մարա՜շ, բու նա՜սել Մարաշ դերլեր.
Մարաշըն իշինդե քիլիսե յանար.
Քիլիսե իշինդե՝ էրմենի յանար[25]։

Ավա՜ղ, Մարաշին Մարաշ են ասում,
Մարա՜շ, քեզ ինչպե՞ս Մարաշ են ասում.
Երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում.
Եկեղեցու մեջ՝ հայեր մոխրացնում։

Մարաշից մազապուրծ վերապրող Վերգինե Մայիկյանը (ծնվ. 1898 թ.) մեզ պատմել է, թե ինչպես Մարաշի Քառասուն Մանկանց եկեղեցին թուրքերը հրկիզում են[26]։ Այնուհետև ողջ մնացած 8 հազար մարաշցիներ, Ուրֆայի 6 հազար հայ բնակչության հետ միասին, հարկադրված բռնում են գաղթի ճամփան դեպի Սիրիա՝ Հալեպ, Դամասկոս, Բեյրութ, Երուսաղեմ, Բաղդադ։

1920 թ. ապրիլի 1-ին քեմալականները պաշարում են Այնթապը։ Պատերազմի ավարտից և զինադադարից հետո, այնտեղ վերաբնակված՝ շուրջ 10 հազար այնթապցի և 8 հազար սեբաստացի հայ գաղթականների հազիվ խաղաղված կյանքը նորից է փոթորկվում։ Տեղում Ազգային միությանը կից ստեղծվում է զինվորական կենտրոնական մարմին՝ Ադուր Լեոնյանի գլխավորությամբ։ Վերջինս հաշվառման է ենթարկում եղած զենքն ու զինամթերքը և կազմակերպում ռումբեր պատրաստելու գործը։

Պատմական այդ իրադարձությունները մեզ պատմել է այնթապցի Գևորգ Հեքիմյանը. «Ադուր փաշան այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տվավ, որ բոմբաներ շինեն։ Ան իր կամավորներով հարձակվեցավ թշնամու վրա և դուրս եկավ պաշարումեն։ Ալի Քրլինջի քսանչորս հազարանոց զորքը մեկ գիշերվա մեջ սարսափահար ետ փախավ՝ զյավուրըն գլոզի քան գոլդու (Հայի աչքն արյուն լցվեց) գոռալով, որը կնշանակե՝ հայերը վրեժով լցվեցին։ Այնթապում Ադուր փաշային վրա այս երգն էին հնարել.

Ադո՜ւր փաշա, քալք սենի,
Ջամ չըրայը յաք սենի.
Թյուրքլար հյուջիմ էդիյոր,
Կամավորլար արշ էդիք»[27]։

Ադո՜ւր փաշա, արթնացիր,
Քո ռումբերը շուտ նետիր.
Թուրքերը գրոհում են,
Կամավորներով արշավիր»։

Այնթապի ինքնապաշտպաններն ստեղծում են 750 հոգուց բաղկացած զորախումբ, բայց այդ ընթացքում Կիլիկիայի զորքերի ընդհանուր հրամանատար Գոզան օղլի Դողան բեյն իր բազմահազար զորքով պաշարում է Հաճըն քաղաքը, որի 30—35 հազար հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էր միայն 6 հազարը։ Քեմալականներին թվում էր, թե հեշտությամբ կգրավեն Կիլիկիայի հայկական միջնաբերդ Հաճընը, սակայն հաճընցիները լի

25 Վավ. 539։
26 Ավելի մանրամասն տե՛ս վավ. 1414։
27 Վավ. 407։

էին վանականությամբ։ Նրանք ևս կազմակերպում են ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդ՝ փաստաբան Կարապետ Չալլյանի ղեկավարությամբ։ Պաշտպանության հրամանատար են ընտրում զորավար Անդրանիկի ղինակից սպա Սարգիս Ճեպեճյանին։ Կազմակերպում են չորս վաշտ, վաթսուն հեծյալներից բաղկացած հեծելախումբ, Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական չորս շրջանների, փորում են խրամատներ, կառուցում դիրքեր և այլ ամրություններ։ Սարտական տրամադրությունը համակում է բոլորին։ Ամենուրեք հնչում են ազատատենչ երգեր.

Հառա՜ջ, հառա՜ջ, հաճընցինե՜ր,
Մեր ոխերիմ թուրքն է եկել.
Հառա՜ջ, կռվենք՝ ի զեն, ի զեն.
Տեսնենք թշնամին ի՞նչ կուզե[28].

Զենք կրելու ընդունակ 16—50 տարեկան 1200 տղամարդկանց թաշխվում է եղած-չեղած 132 հրացանը։ Հետագայում ձեռք է բերվում ևս 300 հրացան, սակայն այդ ևս խիստ անբավարար էր բոլշևիկյան անսպառ ռազմամթերքով զինված քեմալական բանակի դեմ կռվելու համար[29]։

Ահա թե ինչու զենքի խիստ կարիք ունեցող հաճընցիներն անհամբերությամբ սպասում էին Ադանայի Ազգային միության միջոցով գրսից ակընկալվող օգնությանը, որի շնորհիվ ոչ միայն զենք ու զինամթերք, այլև կրռվող նոր ուժեր պիտի հասնեին։ Վերջապես երկնքում հայտնվում է բաղձալի օդանավը.

Օդանավն եկավ մեծ հավետիսով,
Մեր սրտերը լցվան ուրախ հույսերով,
Թափառին բոլոր մարտիկներն անզեն.
Անոնք հոգիով թուրք ջարդել կուզեն։

Եղբայրներն արդեն նամակ գրեցին.
— Կռվեցե՛ք, եղբա՜յրք, կհասնինք,—ըսին,
Սակայն ի՞նչ խաբար. օրերնիս անցան.
Հազար հոգիեն երկուք չերևցան[30]։

Եվ հաճընցի «անզեն մարտիկների» վիճակն ատոիճանաբար դառնում է հուսահատական։ Ֆրանսիական զինվորական ներկայացուցիչներ Թեյարտային և գնդապետ Բրեմոնը թեպետ խոստացել էին ինքնապաշտպանության համար տրամադրել աննդամթերք, զենք ու զինամթերք, ոչ միայն իրենց խոստումը չեն հարգում, այլև թուրքերին տեղեկացնում են հայերի կազմակերպած ինքնապաշտպանության մասին.

Ապրիլ կամ՝ մեռնիլ, կտրի՜ճ հաճընցի,
Գրավենք՝ ըսին, թե չէ՝ կմեռնինք.
Գրավենք զմեզ թնդանոթն ահեղ.
Թող հաղթանակը տանինք փառահեղ[31]։

Հաճընցի ազատամարտիկները մեծ դժվարությամբ գրավում են թշնամու հսկա թնդանոթը, սակայն արկեր չեն գտնում, որ կրակեն ու պաշտ-

28 Վավ. 413։

29 Այդ և հետագա իրադարձությունների մասին պատմել է ղեկթոնցի Հովսեպի Բշտիկյանը (ծնվ. 1903 թ.), որն այն ժամանակ խմբապետ Արամ Չուլակյանի խմբի հետ Ամանոսի լեռներում կռվել է Թուրքերի դեմ. տե՛ս վավ. 1392։

30 Առամ Ասպետի բանաստեղծության ժողովրդական խմբագրման ենթարկված տարբերակը մեջ երգել է հաճընցի Նազենի Սաթամյանը, տե՛ս վավ. 414։

31 Նույն տեղում։

պանվեն։ Սովը ևս խեղճացնում է հաճընցիներին։ Այնինչ թշնամին նորանոր թնդանոթներով ու անհամար կանոնավոր զորքով համալրում է իր ուժերը։ Յոթամսյա երկարատև ու համառ դիմադրությունը ընկճելիս քեմալականներին հաջողվում է հրետանու անընդհատ կրակով ավերել ու հրկիզել նաև Հաճընի քարաշեն տները։ Հարյուրավոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հաճընցիներ անխնա կոտորվում են։ Միայն 380 հոգու է հաջողվում կռվելով ճեղքել թշնամու պաշարման օղակը և դուրս գալ ահավոր հրդեհի օղակից.

Երեք հարյուր հայ քաջերով,
Բոլոր զինված մոսիներով,
Դողան բեյին մենք ջարդ տալով,
Հաճընն ինկավ՝ «Վրե՜ժ» գոռալով...[32]

«Վրե՜ժ» գոռալով ընկնում են նաև 314 օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, պա մական անցյալ ունեցող Տարսոնը, առևտրի կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլ և այլ բնակավայրեր, քանի որ ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր կնքած դաշնակցային պարտավորությունները, 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայի պայմանագրով Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը։ Իսկ արծվաբույն Զեյթունը, հայաբույր Զեյթունը, որի 30 հազար բնակիչներից միայն 1058-ն էր Մեծ եղեռնից մազապուրծ վերադարձել, մարտնչող քաջերից շատերն իրենց ազգային հերոս Արամ Չոլակյանի գլխավորությամբ միանում են Ամանոսի լեռներում ըմբոստացած Հասանբեյցի (Ադանա) Ավետիսի հերոսախմբին։ Հետզհետե տվարացող, թվով 500-ի հասնող այր ու կին կրռվողների այդ խումբը, Տավրոսի լեռներում ղենքը ձեռքներին, գիշեր-ցերեկ կռվելով, ահ ու սարսափի են մատնում շրջակա թուրք գյուղերը և թեպետ հետապնդվում են ասքյարներից, սակայն, անասելի դժվարություններ հաղթահարելով, մինչև զինադադարը շարունակում են մարտնչել թուրքական բռնակալության դեմ՝ հույս ունենալով փրկվել։

Ավերակված տան, հանգած օջախի մրմուռը շարունակում է մխալ նրանց հիշողության մեջ ու կորցրած Երկրի երազը հոգու կանչ դարձած՝ ավանդվում սերնդից սերունդ.

Երբ որ լուծվի Հայոց հարցը,
Եվ մեզ տրվի նախնյաց հողը,
Մենք կվարենք մեր արտերը,
Կշենացնենք մեր գյուղերը։

Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան՝
Զեյթուն, Հաճըն և Մուսա դաղ,
Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,
Կծաղկեցնենք մենք անպայման[33]։

Թեպետ թուրքական բռնակալությունը դաժանորեն ընկճում էր տարբեր վայրերում ծայր առած դիմադրական-ինքնապաշտպանական հերոսամարտերը, սակայն իրենց մարդկային տարրական իրավունքների և ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ, և նրանց դյուցազնական կերպարներն այսօր ևս նորանոր սխրանքների են ոգեկոչում նաև իր ազգային ինքնորոշման համար պայքարող արցախահայությանը։

---

32 Վավ. 415։
33 Վավ. 597։

Արցախահայերի պատմական մեծ խիզախումը ևս զարձել է վերապրած կիլիկիահայերի ստեղծագործական ներշնչանքի աղբյուր, քանի որ արցախյան ազատամարտը մարմնավորում է նաև իրենց՝ արևմտահայերի կորցրած Երկրի ազատագրման փայփայած իղձը.

Ղարաբաղը մեր փոքրիկ
Մասն է Հայոց աշխարհի
Ինչո՞ւ թողնենք օտարին,
Երբ հայերն են հոն բնիկ[34]։

Եվ ժողովրդական նորօրյա երգը հնչում է որպես համազգային պատգամ.

Մեր հա՜յ եղբայրներ, մենք շատ լռեցինք,
Բավական է մեզ այսչափ համբերենք.
Մեր Ղարաբաղը մեզնից խլեցին,
Հիմա ուժ ունինք՝ ետ առնենք նորից[35]։

Կորուսյալ Երկրի նկատմամբ ունեցած մշտարթուն կարոտն ու բաղձալի երազանքները երբեք չեն մարում արևմտահայերի հոգում։ Պատահական չէ, որ Հայկական պետականության վերականգնմանը նրանք արձագանքում են յուրովի, քանզի նրանում են ամփոփում Հայկական՝ մասնավորապես Կիլիկյան պետականության անցյալի փառքը, որի հարատևության համար աղոթքախառն տողեր են հղում առ Աստված.

Տե՜ր, զուն պահե միշտ անսասան
Դյուցազնական Մայր-Հայաստան.
Տուր հարատև խաղաղություն,
Կյանք ու արև, ազատություն.
Հայ դրոշով մեր պետական
Թող միշտ ապրի ազգն հայկական.
Ամեն[36]։

ОТРАЖЕНИЕ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ В КИЛИКИЙСКОМ ФОЛЬКЛОРЕ

В. Г. СВАЗЛЯН

Резюме

Трагические события геноцида и последовавших за ними лет нашли отражение и в фольклоре киликийских армян. Простые, но высокохудожественные задушевные песни своей непосредственностью и глубокой эмоциональностью отражают героический дух народа, восставшего против турецких палачей во имя жизни и Родины.

Наряду с художественной ценностью, песни киликийских армян имеют большое историко-фактографическое и познавательное значение, правдиво и многосторонне отражая освободительную борьбу армянского народа и его стремление к самоутверждению.

34 Վավ. 603։
35 Նույն տեղում։
36 Վավ. 1391։